

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **Լուսինե Կարենի Մխիթարյան**

**Իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունները  
(ՀՀ նյութերով)**

**Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ-2016**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր  
Ի. Տ. Տիգրանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Վ. Ա. Սարգսյան  
տնտեսագիտության թեկնածու  
Հ. Ա. Մարկոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. նոյեմբերի 24-ին ժ. 15<sup>30</sup>  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի  
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ.Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. հոկտեմբերի 24-ին

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Ս. Ա. Գևորգյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Համաշխարհային տնտեսությունում ծավալվող սուր մրցակցության պայմաններում յուրաքանչյուր երկրի համար արդիական է տնտեսական զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Տնտեսագիտական գրականությունում տնտեսական աճի վրա նշանակալի ազդեցություն ունեցող գործոնների շարքում նշվում է իրական փոխարժեքը: Նմանօրինակ փոխազդեցության լայն ճանաչումը զուգակցվում է այդ փոխազդեցության ուղղվածության, «ուժի», փոխարժեքի բարձր և ցածր գնահատականների, տնտեսական քաղաքականության բնույթի վերաբերյալ բազմաթիվ տարածայնություններով:

Փոխարժեքի տատանումների պատճառների և հետևանքների վերլուծությունը կարևորվում է ոչ միայն արտաքին առևտրի առանձնահատկություններով, այլև ներքին շուկայում արտադրության և սպառման, ներդրումների, արտադրողականության, կապիտալ հոսքերի, տոկոսադրույքների և մի շարք այլ տնտեսական ցուցանիշների վրա ունեցած փոխադարձ ազդեցությամբ: Բաց տնտեսություններում փոխարժեքը, մի կողմից, իր ազդեցությունն է ունենում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա, մյուս կողմից, որպես գնային գործոն, մշտապես փոփոխվում է մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացում:

Տնտեսական աճի ապահովման գործում փոխարժեքի դերը կարևորվում է այն փոխանցման ուղիների առկայությամբ, որոնց միջոցով փոխարժեքի փոփոխությունը ազդում է մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա: Իրական փոխարժեքի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունն ունի ընդգծված մակրոտնտեսական կապերի վարքագիծ: Փոխարժեքի ազդեցության չափն ու բնույթը պայմանավորված են տնտեսական աճի հիմքում ընկած գործոններով: Գործնականում անհնար է ճշգրիտ գնահատել տնտեսության վրա փոխարժեքի փոփոխության ազդեցությունն ու հնարավոր բոլոր հետևանքները, քանի որ այդ ազդեցությունը տնտեսության տարբեր ոլորտներում տարբեր կերպով է դրսևորվում՝ կախված ոլորտի միջազգային մրցունակությունից, դեպի ներքին կամ արտաքին շուկա կողմնորոշումից, ներմուծվող հումքի կամ այլ բաղադրիչների օգտագործման ծավալներից և այլ գործոններից:

Ուսումնասիրվող թեմայի առանձին խնդիրներով զբաղվել են բազմաթիվ գիտնականներ, սակայն վերոնշյալ խնդիրների լուծմանն առնչվող հետազոտությունները չի կարելի համարել ամբողջական, բավարար ընդգրկուն, ուստի իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունների բացահայտմանն ու գնահատմանն ուղղված նոր հետազոտությունների իրականացումն անհրաժեշտ է և հրատապ:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Ուսումնասիրության հիմնական նպատակը ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վերլուծության հիման վրա ՀՀ-ում իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունների բացահայտումն ու քանակական գնահատումն է:

Նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները.

- փոխարժեքի տնտեսագիտական բովանդակության մեկնաբանմամբ հստակեցնել դրա՝ որպես մակրոտնտեսական կարգավորման գործիքի դերը,
- դասակարգել փոխարժեքի վարքագիծը պայմանավորող գործոնները,
- ուսումնասիրել և համակարգված ներկայացնել իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունների տեսական մոտեցումները,
- վերլուծել անվանական և իրական արդյունավետ փոխարժեքների վարքագիծը ՀՀ-ում՝ ըստ այն պայմանավորող գործոնների,
- վերլուծել իրական փոխարժեքի տատանումներով պայմանավորված մակրոտնտեսական զարգացումները ՀՀ-ում
- գնահատել ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնների վրա իրական փոխարժեքի ազդեցությունը,
- գնահատել ՀՀ արտահանման և ներմուծման վրա իրական փոխարժեքի ազդեցությունը,
- բացահայտել արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավման հնարավորությունները ՀՀ-ում,
- բացահայտել ՀՀ արժուրային քաղաքականության բնորոշ գծերը տնտեսական աճի ապահովման համատեքստում:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը իրական փոխարժեքի կիրառմամբ տնտեսական աճի ապահովման գործընթացում ձևավորվող տնտեսական հարաբերությունների համակարգն է, հետազոտության առարկան՝ իրական փոխարժեքի և արտահանման աճով ուղեկցվող տնտեսական աճի փոխառնչությունները:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:**

Ատենախոսության նպատակներին համապատասխան կիրառվել են գիտական ճանաչողության վերացարկման, համակարգային հետազոտության, համեմատական, դինամիկ, գործոնային վերլուծությունների, տնտեսամաթեմատիկական մեթոդները: Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և օտարազգի գիտնականների և մասնագետների աշխատությունները, ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կառավարության, Եվրոպական հանձնաժողովի, Առևտրի հաշխարհային կազմակերպության, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Միջազգային կարգավորման բանկի, ՀՀ իրավական տեղեկատվական համակարգի, ՀՀ մաքսային ծառայության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Բելրոուսի ազգային վիճակագրական կոմիտեի, Ղազախստանի ազգային տնտեսության նախարարության վիճակագրության վարչության հրատարակած տեղեկագրերը, պաշտոնական տվյալները, նյութերը, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:**

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական, մեթոդական և գործնական արդյունքներով, որոնք չեն կրկնում այլ հետազոտողների կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Իրականացված վերլուծությունների և հետազոտությունների ընթացքում ստացված գիտական արդյունքներ են հետևյալները.

- դասակարգվել են իրական փոխարժեքի վրա ազդող գործոնները՝ չափանիշ ընտրելով գործոնների ներգործության տևողությունը և շարունակականությունը, բացահայտվել են իրական արդյունավետ փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոնները ՀՀ տնտեսությունում, գնահատվել են իրական արդյունավետ փոխարժեքի վրա անվանական արդյունավետ փոխարժեքի, համախառն ավանդներ/համախառն վարկեր, դրամային վարկեր/արտարժույթային վարկեր, արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունների ազդեցությունները, կանխատեսվել են երկրի գնային մրցունակության փոփոխությունների միտումները,

- ՀՀ-ում ՀՆԱ-ի ծախսային բաղկացուցիչների վրա իրական փոխարժեքի ազդեցության գնահատմամբ մեկնաբանվել են իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունները՝ հիմք ընդունելով այն հիմնավորումը, որ ՀՀ տնտեսական աճի տեմպի տատանումները պայմանավորված են ամբողջական պահանջարկի տատանումներով,
- բացահայտվել են ԵԱՏՄ ընձեռած այն հնարավորությունները, որոնց իրացմամբ կարելի է ՀՀ-ում ապահովել արտահանման աճով ուղեկցվող տնտեսական աճ,
- գնահատվել են հանքահումքային արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախմբերի արտահանման վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցությունները, հիմք ընդունելով այն բացահայտումը, որ ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքը առավել մեծ ազդեցություն ունի զուտ արտահանման վրա, իսկ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են այդ ապրանքախմբերը:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:**

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկություններն ունեն տեսական, գործնական նշանակություն և կիրառության դեպքում կարող են հիմք ծառայել տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և կայուն տնտեսական աճի ձեռքբերման համար: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել ինչպես կառավարման և կարգավորման գործառույթներ իրականացնող պետական մարմինների կողմից, այնպես էլ օգտակար լինել հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար, իսկ աշխատանքում արժարժված հիմնական դրույթները՝ կիրառվել մակրոէկոնոմիկայի ուսումնական գործընթացում և հիմնախնդրին վերաբերող հատուկ դիսցիպլիններում:

**Արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Աշխատանքում

արժարժված հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում, Մակրոէկոնոմիկայի ամբիոնի կողմից կազմակերպված գիտական սեմինարներում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրապարակվել են յոթ գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով: Այն շարադրված է համակարգչային 141 էջի վրա՝ առանց հավելվածների, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, պարունակում է 24 աղյուսակ, 11 գծապատկեր:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության առաջին՝ **«Իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունների տեսական մոտեցումները»**, գլուխը նվիրված է տեսական, մեթոդական հարցերի մեկնաբանմանը: Մասնավորապես, մեկնաբանվել են փոխարժեքի վերաբերյալ տնտեսագիտական գրականությունում առավել հաճախ հանդիպող սահմանումները, ներկայացվել և դասակարգվել են փոխարժեքի վարքագիծը պայմանավորող գործոնները, համակարգված ներկայացվել են փոխարժեքի փոփոխության տնտեսական հետևանքները:

Հեղինակը ընդգծում է գլոբալացման պայմաններում փոխարժեքի՝ որպես տնտեսության մրցունակության գնահատման փոփոխականի և տնտեսության կարգավորման գործիքի, մեծացող դերը:

Հեղինակի կարծիքով, փոխարժեքի վրա ազդող գործոնները դասակարգելիս իրական և անվանական փոխարժեքների վրա ազդող գործոնների հստակ տարանջատումը գրեթե անհնար է, քանի որ փոխարժեքը զգայուն տնտեսական ցուցանիշ է, իրական և անվանական փոխարժեքները փոխկապված են, և այն գործոնները, որոնք ազդում են անվանական փոխարժեքի վրա, ազդում են նաև իրական փոխարժեքի վրա: Հեղինակի կարծիքով փոխարժեքի վարքագիծը պայմանավորող գործոնները նպատակահարմար է դասակարգել երկարաժամկետ ներգործություն ու կարճաժամկետ ազդեցություն ունեցող խմբերում՝ առաջին խմբում ներառելով երկրում արտադրված ապրանքների միջազգային մրցունակությունը և վերջինիս փոփոխությունը, վճարային հաշվեկշռի վիճակը, ազգային արժույթի գնողունակությունը և գնաճի տեմպերը, ազգային եկամտի, տոկոսադրույքի մակարդակները, արժույթային քաղաքականությունը, երկրորդում՝ արժույթային շուկաների գործունեությունը, սպեկուլյատիվ գործառնությունները, սպառողների նախապատվության և ճաշակի

փոփոխությունները, միջազգային վճարումների արագացումը կամ ուշացումը, համաշխարհային շուկայում արժույթի նկատմամբ վստահությունը, ճգնաժամերը, պատերազմները, տարերային աղետները, մակրոտնտեսական կանխատեսումները, գործարար ակտիվության պարբերաշրջանները:

Հեղինակը համամիտ է գոյություն ունեցող այն կարծիքին, որ փոխարժեքի և տնտեսական աճի միջև կապն անմիջական չէ, սակայն հիմնավորում է, որ իրական փոխարժեքի շարժընթացը էականորեն ազդում է երկրի տնտեսական աճի տեմպերի վրա, ընդ որում՝ բավականին բարդ մեխանիզմով: Հեղինակը՝ մեկնաբանելով տարբեր ժամանակաշրջաններում առանձին երկրների համար իրականացված հետազոտությունների արդյունքները, հիմնավորում է, որ փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունների մեկնաբանման հարցում տնտեսագետները տարակարծիք են: Եթե տնտեսական աճի համար վճռորոշ գործոն է արտաքին պահանջարկով պայմանավորված արտահանման ընդլայնումը, ապա ցանկալի է ազգային արժույթը լինի թերարժևորված, եթե աճի աղբյուրների մեջ գերակշռում են ներքին գործոնները, ցանկալի է ազգային արժույթի դիրքերի ամրապնդում, ինչն իր հերթին նպաստում է խնայողությունների և ներդրումների աճին՝ մեծապես ազդելով շուկայական զարգացումների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Իրական փոխարժեքի տատանումները և մակրոտնտեսական զարգացումները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում գնահատվել և մեկնաբանվել են ՀՀ-ում իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխառնչությունները՝ հատկապես կարևորելով արտահանման մեծ բաժինը և որակական մասն ապահովող ապրանքախմբերի արտահանման վրա իրական փոխարժեքի ունեցած ազդեցությունը:

ՀՀ տնտեսական իրավիճակը բնութագրվում է կարճաժամկետ հավասարակշռության պայմաններով, իսկ իրական փոխարժեքը արտաքին զարգացումների և շուկերի փոխանցման գլխավոր մեխանիզմներից է, ուստի հիմնավոր է հեղինակի կողմից իրական փոխարժեքի և ՀՀ տնտեսական աճի փոխառնչությունների մեկնաբանումը եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի առանձին բաղկացուցիչների վրա իրական փոխարժեքի ազդեցությամբ: Գրանժերի թեստի օգնությամբ իրականացված ՀՆԱ-ի, ներդրումների, սպառման, զուտ արտահանման

իրական մեծությունների և իրական արդյունավետ փոխարժեքի միջև պատճառահետևանքային կապերի հետազոտման արդյունքները թույլ են տվել իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխազդեցությունները դիտարկել հետևյալ էկոնոմետրիկ մոդելներով.

$$\ln RCNM_t = \ln c_0 + c_1 \ln RGDP_t + c_2 \ln RGDP_{t-1} + c_3 \ln REER_{t-3} + c_4 d_t^1 + \ln \varepsilon_t^1 \quad (1.1)$$

$$\ln RINV_t = \ln i_0 + i_1 \ln RGDP_t + i_2 \ln REER_{t-2} + i_3 d_t^3 + \ln \varepsilon_t^2 \quad (2.1)$$

$$RNX_t = n_0 + n_1 REER_{t-3} + n_2 RNX_{t-1} + n_3 d_t^1 + \varepsilon_t^3 \quad (3.1)$$

$$RGDP_t = \alpha_0 + \alpha_1 \widehat{RNX}_t + \alpha_2 RGDP_{t-1} + \alpha_3 d_t^1 + \alpha_4 d_t^4 + \varepsilon_t^4 \quad (4.1)^1$$

Հեղինակը 1.1-4.1 մոդելները գնահատել է փոքրագույն քառակուսիների եղանակով:

## Աղյուսակ 1

### 1.1-4.1 մոդելների գնահատման արդյունքները

OLS ESTIMATION RESULTS											
U 1.1			U 2.1			U 3.1			U 4.1		
DEPENDENT VARIABLE: D(LOG(RCNM))			DEPENDENT VARIABLE: D(LOG(RINV))			DEPENDENT VARIABLE: D(D(RNX))			DEPENDENT VARIABLE: D(D(RGDP))		
variable	coef.	prob	variable	coef.	prob	variable	coef.	prob	variable	coef.	prob
c	0.10	0.0000	c	0.10	0.0000	c	-20.60	0.0000	c	343	0.0000
D(LOG(REER(-3)))	-0.34	0.0390	D(LOG(REER(-2)))	-1.07	0.0285	D(REER(-3))	-3.83	0.0001	RNXEST	-2.18	0.0002
D(D(LOG(RGDP)))	0.19	0.0000	D(LOG(RGDP))	2.45	0.0000	D(D(RNX(-1)))	-0.48	0.0000	D(D(RGDP(-1)))	-0.32	0.0000
D(D(LOG(RGDP(-1))))	0.17	0.0000	D3	-0.53	0.0000	D1	85.30	0.0000	D1	-697	0.0000
D1	-0.29	0.0000							D4	-678	0.0000
Adjusted R-squared	0.96		Adjusted R-squared	0.98		Adjusted R-squared	0.71		Adjusted R-squared	0.91	
Prob(F-statistic)	0.0000		Prob(F-statistic)	0.0000		Prob(F-statistic)	0.0000		Prob(F-statistic)	0.0000	
Durbin-Watson stat	1.93		Durbin-Watson stat	2.24		Durbin-Watson stat	2.21		Durbin-Watson stat	2.22	
Akaike info criterion	-2.79		Akaike info criterion	-1.05		Akaike info criterion	51.70		Akaike info criterion	54.16	
Schwarz criterion	-2.90		Schwarz criterion	-0.90		Schwarz criterion	51.85		Schwarz criterion	54.34	

<sup>1</sup> որտեղ  $\ln RCNM_t, \ln RINV_t, \ln RGDP_t, \ln REER_t$  -ները  $t$  -րդ եռամսյակում իրական սպառման, իրական համախառն կուտակման, իրական ՀՆԱ-ի մեծություններն են լոգարիթմված վիճակում,  $RNX_t$  - ն իրական զուտ արտահանման ծավալն է  $t$  -րդ եռամսյակում,  $\widehat{RNX}_t$  - ն զուտ արտահանման իրական ծավալի կանխատեսվող արժեքն է  $t$  -րդ եռամսյակում,  $REER_t, REER_{t-2}, REER_{t-3}$  - ն իրական արդյունավետ փոխարժեքի մակարդակն է համապատասխանաբար  $t$  -րդ  $t - 2, t - 3$  -րդ եռամսյակներում,  $RGDP_t$  - ն և  $RGDP_{t-1}$  -ը համապատասխանաբար  $t$  -րդ և  $t - 1$  -րդ եռամսյակում իրական ՀՆԱ-ի մեծությունն է,  $\ln c_0, c_1, c_2, c_3, c_4, \ln i_0, i_1, i_2, i_3, n_0, n_1, n_2, n_3, \alpha_0, \alpha_1, \alpha_2, \alpha_3, \alpha_4$  -երը համապատասխանաբար 1.1, 2.1, 3.1 և 4.1 մոդելների անհայտ պարամետրերն են,  $d_t^1$  - ն առաջին եռամսյակը նկարագրող մեծություն է, որը առաջին եռամսյակի համար ընդունում է 1, իսկ մյուս եռամսյակների դեպքում՝ 0 արժեքը,  $d_t^2$  - ն երկրորդ եռամսյակը նկարագրող մեծություն է, որը երկրորդ եռամսյակի համար ընդունում է 1, իսկ մյուս եռամսյակների դեպքում՝ 0 արժեքը,  $d_t^3$  - ն երրորդ եռամսյակը նկարագրող մեծություն է, որը երրորդ եռամսյակի համար ընդունում է 1, իսկ մյուս եռամսյակների դեպքում՝ 0 արժեքը,  $d_t^4$  - ն չորրորդ եռամսյակը նկարագրող մեծություն է, որը չորրորդ եռամսյակի համար ընդունում է 1, իսկ մյուս եռամսյակների դեպքում՝ 0 արժեքը,  $\ln \varepsilon_t^1, \ln \varepsilon_t^2, \varepsilon_t^3, \varepsilon_t^4$  -երը համապատասխան մոդելի պատահական սխալներն են  $t$  -րդ եռամսյակում,  $t$  - ն եռամսյակի ինդեքսն է:

ՀՀ-ում ամբողջական պահանջարկի բաղկացուցիչների վրա իրական փոխարժեքի ազդեցության ուժգնությունը գնահատելու համար 1.1, 2.1 և 3.1 գնահատված մոդելներում հաշվարկվել է միջին առաձգականությունը ըստ իրական արդյունավետ փոխարժեքի:

**Աղյուսակ 2**

*Միջին էլաստիկությունը ըստ իրական արդյունավետ փոխարժեքի*

Բացատրվող փոփոխական	Բացատրող փոփոխական	Միջին էլաստիկությունը
RNX	D(REER(-3))	3.04%
RCNM	D(LOG(REER(-3)))	-0.06%
RINV	D(LOG(REER(-2)))	-0.20%

Ստացված գործակիցները ցույց են տալիս, որ իրական արդյունավետ փոխարժեքը առավել մեծ չափով ազդեցություն ունի իրական զուտ արտահանման վրա: Մասնավորապես իրական արդյունավետ փոխարժեքի՝ դիտարկված ժամանակահատվածում միջին մեծության 1% արժևորման պարագայում, առևտրային հաշվեկշռի պակասուրդը աճում է միջինում 3,04%-ով, իրական սպառումը միջինում նվազում է 0,06%-ով, իրական ներդրումների ծավալը միջինում նվազում է 0,20%-ով: Ըստ ստացված արդյունքների զուտ արտահանման կանխատեսվող արժեքի աճը 1 մլրդ դրամով, որը նշանակում է առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացում 1 մլրդ դրամով, հանգեցնում է իրական ՀՆԱ-ի անկման միջինում 2,2 մլրդ դրամով:

Էկոնոմետրիկ մոդելի օգնությամբ մատնանշվել են իրական արդյունավետ փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոնները ՀՀ տնտեսությունում, գնահատվել՝ դրանց ազդեցության չափը իրական արդյունավետ փոխարժեքի վրա: Այս դիտարկման լույսով հեղինակը եզրակացրել է, որ ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքի վարքագիծը բացատրվում է անվանական արդյունավետ փոխարժեքի, համախառն ավանդներ/համախառն վարկեր, դրամային վարկեր/արտարժութային վարկեր, արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունների վարքագծերով:

Հաշվի առնելով այն, որ փոխարժեքն էական ազդեցություն ունի երկիր ներմուծված, երկրում արտադրվող արտահանելի և ներմուծվող ապրանքների հետ մրցակցող ոչ արտահանելի ապրանքների՝ ներքին արժույթով գնագոյացման վրա, հեղինակը վերլուծել է ՀՀ արտահանման և ներմուծման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքները, բացահայտել է ՀՀ արտաքին առևտրում առկա հիմնախնդիրները՝ կապված երկրի

առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի, արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալների, ապրանքախմբերի կենտրոնացվածության աստիճանի հետ:

### Աղյուսակ 3

Առևտրային հաշվեկշռի վիճակը բնութագրող ցուցանիշների փոփոխությունները 2000-2014թթ.

Տարիներ	Արտահանման չափաբաժինը %	Արտահանման չափաբաժնի շեղումը միջինից %	Ներմուծման չափաբաժինը %	Ներմուծման չափաբաժնի շեղումը միջինից %	Անհաշվեկշռվածու թյան գույքակրկիցը	Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում %
2000	23.8	-1.6	51.6	4.1	0.37	15.8
2001	26.5	1.2	51.1	3.6	0.32	10.4
2002	31.5	6.1	50.8	3.3	0.24	6.2
2003	35.0	9.6	54.5	7.0	0.22	6.2
2004	31.2	5.9	49.3	1.8	0.22	2.2
2005	29.8	4.4	45.7	-1.8	0.21	2.5
2006	24.3	-1.1	42.0	-5.5	0.27	3.9
2007	19.5	-5.8	41.4	-6.1	0.36	8.5
2008	15.1	-10.2	42.7	-4.8	0.48	15.0
2009	15.8	-9.5	44.3	-3.2	0.47	17.6
2010	21.3	-4.0	47.1	-0.4	0.38	14.2
2011	24.3	-1.0	46.4	-1.1	0.31	11.1
2012	25.7	0.3	48.3	0.8	0.31	11.1
2013	26.2	0.8	47.3	-0.2	0.29	8.0
2014	30.3	4.9	50.2	2.7	0.25	7.9

Հեղինակի կողմից հաշվարկված և աղյուսակ 3-ում ներկայացված ցուցանիշները արտացոլում են տնտեսության կախվածությունը համաշխարհային տնտեսությունից: Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման չափաբաժինը կազմել է միջինում 25.3%, ներմուծման չափաբաժինը՝ 47.5%: Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում ՀՀ-ի դիրքը անկայուն է: Այդ մասին է փաստում ՀՀ-ում արտահանման և ներմուծման քվոտաների միջին քառակուսային շեղումների մեծ արժեքը (համապատասխանաբար՝ 5.74%, 3.85%): Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ մեծ է փոքր ավելացված արժեքով արտադրանքի տեսակարար կշիռը: Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքը սիմետրիկ չէ և երկիրը աշխատանքի միջազգային բաժանման մեջ տեղաշարժված է դեպի

ռեսուրսարդյունահանող տեխնոլոգիաներ: Առևտրային հաշվեկշռի կայունությունը բնութագրող անհաշվեկշռվածության գործակիցը ՀՀ-ում միջինում կազմել է 31%, որը փաստում է տնտեսական զարգացման՝ հատկապես արտաքին առևտրային բաղկացուցչի, անկայուն լինելը:

Վերլուծելով ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքներն ըստ երկրների, հեղինակը գտնում է, որ դեպի Եվրամիություն արտահանումը ներկայիս կառուցվածքով անհեռանկարային է, քանի որ արտահանվում են մեծամասամբ հումքային ապրանքներ, որոնց ավելացված արժեքը փոքր է և ֆոնդային բորսայում մետաղների գների փոփոխությունները մեծ վնաս են հասցնում ՀՀ տնտեսությանը: Դեպի ՌԴ արտահանումը բավականին բազմազանեցված է: Արտահանվում է ավելի քան 300 անուն՝ գրեթե ամբողջությամբ պատրաստի ապրանք, որը մեծ հեռանկարներ է ստեղծում ՀՀ տնտեսության զարգացման և ներուժի ավելացման համար:

Հիմք ընդունելով հեղինակի այն բացահայտումը, որ ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքը առավել մեծ ազդեցություն ունի զուտ արտահանման վրա, իսկ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են հանքահումքային արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքախմբերը, գնահատվել են այդ ապրանքախմբերի արտահանման վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցությունները էկոնոմետրիկ մոդելներով:

Հեղինակը բացահայտել է, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժևորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման 2.55%-ային կետով նվազման, մեկ եռամսյակ անց հանգեցնում է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.18%-ային կետով նվազման, մեկ եռամսյակ անց հանգեցնում է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտադրանքի արտահանման 1.85%-ային կետով նվազման, երեք եռամսյակ անց հանգեցնում է ոչ թանկարժեք մետաղների արտահանման 0.34%-ային կետով նվազման: Կատարված հետազոտությունը հեղինակի համար հիմք է եզրակացնելու, որ իրական փոխարժեքը համաշխարհային շուկայում ՀՀ տնտեսության մրցունակության վրա անմիջական և նշանակալի ազդեցություն ունեցող հիմնարար փոփոխական է:

Ատենախոսության երրորդ՝ «Արտահանման խթանմամբ ուղեկցվող տնտեսական աճի ապահովման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը բացահայտել է ՀՀ արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավման՝ Եվրասիական տնտեսական միության ընձեռած հնարավորությունները, արժույթային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում,

Հեղինակը հիմնավորել է, որ ԵԱՏՄ անդամ երկրներից ՌԴ-ն ՀՀ-ի համար ամենամեծ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող երկիրն է: Տնտեսական աճի խթանման ԵԱՏՄ-ի՝ ՀՀ-ին ընձեռած հնարավորությունները բացահայտելու, մասնավորապես դեպի ՌԴ ՀՀ արտահանման ներուժը գնահատելու համար վերլուծվել է ՌԴ ներմուծման կառուցվածքը, կատարվել է ՌԴ-ի ներքին սպառողական գների մոնիտորինգ, ուսումնասիրվել է հայկական արտադրության ապրանքների մրցունակությունը ռուսական շուկայում, վեր են հանվել հայկական ապրանքների՝ դեպի ՌԴ արտահանման խոչընդոտները: Հեղինակը փաստում է, որ ՌԴ-ն մեծամասամբ արտահանում է հումքային և ներմուծում՝ պատրաստի ապրանքներ: Սա ՀՀ տնտեսության համար հեռանկարային զարգացման հիմքեր ստեղծելու, մասնավորապես, ՀՀ արտահանումը բազմազանեցնելու և արտոնյալ պայմաններով առավել մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքներ ՌԴ արտահանելու մեծ հնարավորություն է:

ՌԴ ներմուծման և ՀՀ արտահանման կառուցվածքների վերլուծության հիման վրա առանձնացվել են երկկողմ առևտուրը խորացնելու, մասնավորապես արտահանումը խթանելու տեսանկյունից շահավետ հիմնական ապրանքները: Ռուսական շուկայում հայկական ապրանքների մրցունակության որոշման համար իրականացվել է արտահանման «թիրախավորում», դեպի ռուսական շուկա արտահանման ենթակա հիմնական հեռանկարային ապրանքախմբերի սահմանում, ռուսական շուկայում նշված հայկական արտադրության ապրանքների վերջնական գների հաշվարկ, արդեն սահմանված ապրանքախմբերի գների մշտադիտարկում ռուսական շուկայում և տվյալ ապրանքների միջին գների հետ համեմատություն:

Հեղինակը գտնում է, որ չհամաձայնեցված արժույթային քաղաքականությունը որոշակի տնտեսական կորուստների պատճառ է և համաձայնեցված արժույթային քաղաքականության իրականացումն օբյեկտիվ անհրաժեշտություն է նաև տնտեսական ինտեգրման ներկա փուլում, երբ կարևորվում են փոխադարձ ներդրումների և դրամական

փոխանցումների ժամանակ արժութային սահմանափակումների վերացումը և արժութային գործարքների իրականացման միանման սկզբունքների կիրառումը: ԵԱՏՄ անդամ երկրների կողմից իրականացվող դրամավարկային, արժութային և տոկոսադրույքի քաղաքականությունների էական տարբերություններն ազգային տնտեսություններում լուրջ խոչընդոտ են ԵԱՏՄ շրջանակներում արդյունավետ համագործակցության և տնտեսական հաջողության հասնելու ճանապարհին:

Կատարված ուսումնասիրությունները հեղինակին հնարավորություն են ընձեռել եզրակացնելու, որ ԵԱՏՄ անդամ երկրների կողմից դրամավարկային քաղաքականության համաձայնեցման նախնական քայլերը՝ գնաճի նպատակադրման ռազմավարության այս կամ այն չափով անցումը, արդեն առկա են: Ընդհանուր առմամբ այս ուղղությամբ ՀՀ-ն որևէ փոփոխություն չի կատարելու: Սակայն վերջին տարիներին ՀՀ ԿԲ-ի կողմից ազատ լրղացող քաղաքականություն չի իրականացվել: ԿԲ-ն մշտապես վերահսկել է արժութային շուկայում փոխարժեքի ձևավորման գործընթացը, որը մի կողմից զսպել է փոխարժեքի կտրուկ արժեզրկումը՝ գնաճի տեմպերը մեղմելու համար, մյուս կողմից բացասաբար է անդրադարձել արտաքին առևտրի՝ մասնավորապես արտահանման վրա:

Եզրակացություն բաժնում հակիրճ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, արվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Փոխարժեքի ձևավորման ընթացքը բարդ և բազմագործոն է՝ պայմանավորված ազգային ու համաշխարհային տնտեսությունների փոխկապվածությամբ և տնտեսական քաղաքականությամբ: Կոնկրետ տնտեսական իրավիճակից կախված այս կամ այն գործոնը կարող է առավել գերիշխող լինել:

- Իրական փոխարժեքը այն հիմնարար և առանցքային փոփոխականն է, որն անմիջական և նշանակալի ազդեցություն է ունենում համաշխարհային շուկայում տնտեսությունների մրցունակության, ինչպես նաև մրցունակության հետևյալ միջանկյալ գործոնների զարգացումների վրա՝ ներքին և արտաքին ներդրումներ, արտահանում, ներմուծում, ՕՈՒՆ, նորամուծություններ: Փոխարժեքի դրական և բացասական ազդեցությունը արտադրողականության և մրցունակության վրա, մի կողմից, իրականացվող արժութային քաղաքականության հետևանք է մյուս կողմից, կախված է տնտեսության զարգացման մակարդակից:

• ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքի վարքագիծը բացատրվում է անվանական արդյունավետ փոխարժեքի, համախառն ավանդներ/համախառն վարկեր, դրամային վարկեր/արտարժույթային վարկեր, արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունների վարքագծերով:

• Իրական փոխարժեքը դարձել է արտաքին զարգացումների և շուկերի փոխանցման գլխավոր մեխանիզմներից՝ էականորեն ազդելով ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա, ընդ որում՝ ոչ անմիջական և բավականին բարդ մեխանիզմով: ՀՀ տնտեսական իրավիճակը բնութագրվում է կարճաժամկետ հավասարակշռության պայմաններով, ուստի տնտեսական աճի տատանումները մեծապես պայմանավորված են ամբողջական պահանջարկի բաղկացուցիչների տատանումներով: Իրական արդյունավետ փոխարժեքը ամբողջական պահանջարկի բաղկացուցիչներից առավել մեծ չափով ազդում է զուտ արտահանման վրա:

• ՀՀ արտաքին առևտրում առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ՝ կապված արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալների, ապրանքախմբերի կենտրոնացվածության աստիճանի հետ, սակայն գերխնդիր է ՀՀ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը, որը պետության արտաքին պարտքի աճի պատճառ է:

• Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում մեծ է փոքր ավելացված արժեքով արտադրանքի տեսակարար կշիռը, որը փաստում է տնտեսական համակարգի զարգացման ցածր աստիճանի մասին: Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքը սիմետրիկ չէ և երկիրը աշխատանքի միջազգային բաժանման մեջ տեղաշարժված է դեպի ռեսուրսարդյունահանող տեխնոլոգիաներ:

• ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում վերամշակված արտադրանքի տեսակարար կշռի իջեցումը պայմանավորված է ոչ միայն համաշխարհային տնտեսության վերակառուցման գործընթացներով, այլև պարբերաշրջանային ճգնաժամերով: Հատկապես կարևորվում է անվանական փոխարժեքը, քանի որ արժույթի արժեզրկումը խթանում է հումքի արտահանումը:

• ՀՀ-ում տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորվում են արտահանման խթանումը, ներմուծումը փոխարինող արտադրության զարգացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտահանման և ներմուծման ապրանքային, աշխարհագրական կառուցվածքների կատարելագործման ճանապարհով ներմուծման

կրճատումը: Հեղինակի կարծիքով, այս խնդիրների լուծմանն ուղղված տնտեսական քաղաքականության հետագա միջոցառումների մշակման և իրականացման ժամանակ պետք է կարևորել այն, որ ՀՀ-ն ունի առևտրի արտոնյալ պայմաններ ինչպես Եվրամիության, այնպես էլ ԵԱՏՄ-ի հետ, սփյուռքի առկայությունը, ազգային արժույթի մեծ տատանումները:

- Հայկական արտադրության շատ ապրանքներ գնային առումով բավականին մրցունակ են ռուսական շուկայում, իսկ եթե դիտարկվի նաև գին-որակ հարաբերակցությունը, հայկական գրեթե բոլոր ապրանքները բարձր մրցունակ են և մեծ պահանջարկ ունեն ՌԴ-ում:

- ՀՀ արտահանման խթանման և բազմազանեցման համար ամենակարևոր նշանակություն ունեցող երկիրը ՌԴ-ն է: Ռուսական շուկան հայկական արտադրողների համար կայանալու, հզորանալու, արտադրության մասշտաբներն ընդլայնելու և հետագայում նաև այլ երկրների շուկաներ մուտք գործելու համար կայուն հիմք է:

- ՀՀ-ում լողացող արժույթային ռեժիմն ընդունելուց հետո նկատվել է «վախ լողալուց» տնտեսական երևույթը, որը, սակայն, մասամբ հաղթահարվել է շնորհիվ տնտեսությունում որոշակի դրական տեղաշարժերի՝ ներմուծման փոխարինողների արտադրության, արտահանման աճի, ցածր գնաճի և ֆինանսական կայունության ձեռք բերման: Փոխարժեքի տատանումները հարթելու նպատակով ԿԲ-ն միջամտել է արտարժույթային շուկային՝ ազդելով ձևավորվող փոխարժեքի վրա:

Ուսումնասիրությունների արդյունքում կատարված եզրահանգումներից ելնելով արվել են ՀՀ տնտեսական աճին նպաստող, մասնավորապես արտահանումը խթանող առաջարկություններ:

- Առաջարկվում է ՀՀ որոշ տարածքներ հայտարարել վերաարտահանման համար ազատ տնտեսական գոտիներ: Տնտեսապես շահավետ է ՌԴ-ից, Ղազախստանից և այլ երկրներից ներմուծել էժան հումք, վերամշակել և արտահանել ՌԴ կամ երրորդ երկիր: ԵԱՏՄ անդամակցությամբ կարելի է արդյունահանվող գունավոր մետաղների քանակը հասցնել տնտեսական շահավետության մակարդակի՝ ՌԴ-ից էժան հումքի ներմուծման հաշվին, և հիմնավորել ձուլարանների կառուցման անհրաժեշտությունը, որը ներկայումս արդյունահանվող ծավալների փոքր լինելու պատճառով տնտեսապես շահավետ չէ:

Արդյունքում ՀՀ-ից կարտահանվի պատրաստի մետաղ առավել բարձր ավելացված արժեքով:

•ՀՀ-ն աշխարհի այն փոքրաթիվ երկրներից է, որն ունի բազմամիլիոնանոց սփյուռք: Սա բազային պահանջարկ է դեպի ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Նիդեռլանդներ, ՌԴ և շատ այլ երկրներ ապրանք արտահանելիս: Դեպի այս տարածաշրջաններ ապրանք արտահանելիս առաջարկվում է հենվել տեղի հայ ազգաբնակչության պահանջարկի վրա՝ արտահանումը ճիշտ թիրախավորելու պարագայում:

•Ներկայումս ԵՄ-ՌԴ քաղաքական հարաբերությունները լարված են և երկկողմ պատժամիջոցների ազդեցության ներքո տնտեսական համագործակցությունը անկում է ապրում: Այս պարագայում ՀՀ-ն կարող է առաջարկել «մրցունակ» պայմաններ՝ երկրում ներդրումներ կատարելու, արտադրանք թողարկելու և ՌԴ արտահանելու համար:

•ՀՀ-ի համար կարող է բացվել ահռելի ֆինանսական շուկա՝ ՌԴ-ում ֆինանսական և տնտեսական անկայուն իրավիճակի հաղթահարումից հետո: Այսպես, ՀՀ կառավարությունը կարող է պարտատոմսերի մի մասը թողարկել ռուբլով, իսկ ֆինանսական և իրական հատվածը կստանա ինստիտուցիոնալ ներգրավումների առավել մեծ հնարավորություններ՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

•ՌԴ տարածքի մեծությունից, բնակչության անհամաչափ տեղաբաշխումից, խոշոր քաղաքների միջև եղած մեծ հեռավորությունից, տարբեր քաղաքների միջև գների մեծ՝ մինչև 3-4 անգամ տարբերությունից ելնելով, առաջարկվում է դեպի ՌԴ իրականացնել «թիրախավորված» արտահանում: Սա ենթադրում է արտահանում դեպի 250 հազարից ավել բնակչություն ունեցող, Երևանից մինչև 3000 կմ. հեռավորության վրա գտնվող և արտահանման տեսանկյունից տնտեսապես առավել շահավետ քաղաքներ: Դեպի վերոնշյալ չափանիշներով ընտրված 25 քաղաքներ արտահանումը առաջարկվում է կազմակերպել հետևյալ երթուղիներով.

Երևան-Թբիլիսի-Նալչիկ-Պյատիգորսկ-Արմավիր-Դոնի Ռոստով-Վորոնեժ-Մոսկվա-Սանկտ Պետերբուրգ: Երթուղու երկարությունը 2967 կմ է, բեռնափոխադրումը կարելի է իրականացնել 2-3 օրում: Նշված երթուղու մոտակայքում են գտնվում Վլադիկավկազ, Գրոզնի, Մախաչկալա, Սոչի, Կրասնոդար, Տուլա, Կալուգա, Տամբով քաղաքները:

Երևան-Թբիլիսի-Գորի-Ալազիռ-Նովոպավլովսկ-Էլիստա-Վոլգոգրադ-Կամիշին-Սարատով-Սիզրան-Տոլյատտի-Ուֆա-Չելյաբինսկ: Երթուղու երկարությունը 2947 կմ է, բեռնափոխադրումը կարելի է իրականացնել 2-3 օրում: Երթուղու շրջակայքում են գտնվում Պենզա, Սամարա, Կազան, Նիժնի Նովգորոդ, Պերմ քաղաքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մխիթարյան Լ. Կ., **ՀՀ արժույթային քաղաքականության բնորոշ գծերը**, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», թիվ 5 -Երևան 2012, էջ 37-46:
2. Մխիթարյան Լ. Կ., **Փոխարժեքի տնտեսագիտական բովանդակության մեկնաբանումը**, Զարգացման ժամանակակից մարտահրավերներ: ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր ՀՊՏՀ:-Եր.: Տնտեսագետ, 2015, էջ 341-346:
3. Մխիթարյան Լ. Կ., **Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները**, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» թիվ 3(39), «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2015, էջ 60-73:
4. Մխիթարյան Լ. Կ., **ՀՀ արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավման Եվրասիական տնտեսական միության ընձեռած հնարավորությունները**, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #11-12 (183-184), Երևան 2015, էջ 92-95:
5. Տիգրանյան Ի. Տ., Մխիթարյան Լ. Կ., **ՀՀ-ում արտադրված ապրանքների գնային մրցունակության գնահատումը Ռուսաստանի Դաշնությունում**, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #11-12 (183-184), Երևան 2015, էջ 96-98:
6. Մխիթարյան Լ. Կ., Պողոսյան Վ. Վ. , **ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումը էկոնոմետրիկ մոդելի օգնությամբ** (The study of main factors affecting the real effective exchange rate in RA through econometric model), Российско-китайский научный журнал «Содружество» Ежемесячный научный журнал No 4 (4), 2016, էջ 5-8:
7. Մխիթարյան Լ. Կ., **Իրական փոխարժեքի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում**, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #7-8 (191-192), Երևան 2016, էջ 68-70:

МХИТАРЯН ЛУСИНЕ КАРЕНОВНА

**Взаимосвязи реального валютного курса и экономического роста**

**(по материалам РА)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02- "Экономика, управления хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 24-ого ноября в 15<sup>30</sup>, на заседании специализированного совета по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

**Резюме**

Тема диссертации посвящена выявлению и количественной оценке взаимосвязей реального валютного курса и экономического роста в РА.

Для реализации данной цели в работе были поставлены следующие задачи:

- путем интерпретации экономического содержания валютного курса уточнить роль последнего в качестве инструмента макроэкономического регулирования,
- классифицировать факторы, определяющие поведение валютного курса,
- анализировать и в систематизированном виде представить теоретические подходы к соотношениям реального валютного курса и экономического роста,
- анализировать поведение номинальных и реальных эффективных валютных курсов в РА в соответствии с определяющими факторами,
- анализировать изменения макроэкономических показателей в РА, вызванные колебаниями реального валютного курса,
- оценить влияние реального валютного курса на факторы экономического роста РА,
- оценить влияние реального валютного курса на экспорт и импорт в РА,
- выявить возможности улучшения соотношения импорта и экспорта в РА,
- выявить характерные черты валютной политики РА в контексте обеспечения экономического роста,

В результате проведенных анализов и исследований получены следующие научные результаты:

- классифицированы факторы, влияющие на реальный валютный курс, в качестве критерия выбраны продолжительность и непрерывность влияния факторов, выявлены основные факторы в экономике РА, влияющие на реальный эффективный валютный курс, оценено

влияние номинального эффективного валютного курса, а также влияние соотношений валовые депозиты/валовые кредиты, денежные кредиты/валютные кредиты, экспорт/ВВП на реальный эффективный валютный курс, прогнозированы тенденции изменений ценовой конкурентоспособности страны.

- Посредством оценки влияния реального валютного курса на отдельные компоненты ВВП в РА, были интерпретированы взаимосвязи реального валютного курса и экономического роста на основании того, что колебания темпа экономического роста вызваны колебаниями совокупного спроса.
- Выявлены представленные ЕАЭС возможности, посредством реализации которых возможно обеспечить в РА экономический рост, поддерживаемый ростом экспорта.
- Оценены влияния реального валютного курса в качестве ценового фактора на экспорт минерально-сырьевой продукции, продуктов готовой пищи, драгоценных и полудрагоценных камней, драгоценных металлов, недрагоценных металлов и изделий из них, основанные на открытии о том, что в РА реальный эффективный валютный курс имеет более огромное влияние на чистый экспорт, а качество и большую долю экспорта обеспечивают эти товарные группы.

## **The relations of real exchange rate and economic growth (based on materials of RA)**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02- ‘‘Economics, Management of the Economy and its Spheres’’.

The defense of the thesis will take place on 24th November, 2016, at 15<sup>30</sup>, at 014 Council of Economics of SCC RA at Armenia State University of Economics : 128 M. Nalbandyan str., Yerevan,0025.

### **Abstract**

The topic of the thesis is devoted to the identification and to the disclosure interconnection of real exchange rate and economic growth in RA.

To achieve the goals the following objectives were set:

- to clarify its role as a macroeconomics regulating tool with the content interpretation of economic exchange rate ,
- to classify the factors determining the behavior of the exchange rate
- to analyze and introduce the theoretical aspects of real exchange rate and economic growth interconnections in a systematic way,
- to analyze the behavior of nominal and real exchange rate in RA based on the factors determining them,
- to analyze macroeconomic developments determined by the real exchange rate fluctuations in RA,
- to evaluate the impact of real exchange rate on the factors providing economic growth in RA,
- to evaluate the impact of real exchange rate on export and import in RA,
- to identify the opportunities of export and import ratio improvement in RA,
- to identify the characteristics of RA Monetary Policy in the economic growth context.

Scientific results based on the analysis and studies are produced as follows:

- the factors affecting the exchange rate have been classified selecting the length and continuity of impact of the factor as a criterion, the main factors affecting REER have

been identified, the nominal effective exchange rate, gross deposits/ gross loans, loans in AMD/ foreign currency loans, export/GDP impact on real effective exchange rate there have been evaluated, the trends of price competitiveness changes have been forecast.

- the relations between real exchange rate and the economic growth have been interpreted evaluating the impact of real exchange rate on separate GDP components calculated in RA, basing on the proposition that the pace fluctuation of RA economic growth are determined by the fluctuations of demand.
- with the realization of the identified opportunities provided by EEU it will be possible to proved economic growth accompanied by import growth in RA
- the impact of the real exchange rate, as a price factor impact, on the export of mineral products, prepared food products, precious and semi-precious stones, precious metals, base metal products groups and the goods made from them has been evaluted, based on the revelation, that REER has great impacy on net export, and those product groups ensure the most part of export and the quality of it in RA .

A handwritten signature in black ink, appearing to be 'M. A. S.', is written over a faint, light-colored circular stamp or watermark.